

ԲԱՏԱՆՈՐԻՆՆԵՐԻՆ

Պոչկարիտ համար	12 ֆր.
արեկա	7 "
վեցումս	7 "
Արսասահմանի համար ստրեկ. ն	15 ֆր.
վ. ցաւսեւոյ	8 "
Աւերիկայի համար	3 սյ.
ստր. կան	3 սյ.
վեցումս	1.50 "

Իր ստացման տոյր սոսիս կենսին համար 40 սանրիս իսկ վերջին երեսին համար 20 սանրիս է. երեսին ս էլի սեղաններու համար 20 0/0 զեղը կը լայն:

Վառակայի համար ձեռք 40 սանրիս է

# ՇԱՐՋՈՒՄ

ԼՐԱԳԻՐ ԱԶԳ՝ՅԻՆ. ՔԱՂՍՔԱԿԱՆ ԵՒ, ԳՐԱԿԱՆ

ԿԸ ՀՐԱՏ ԲՈՎՈՒԻ ԶՈՐԵՔՇԱՔԹԻ ԵՒ ՇՄԱԹ ՕՐԵՐԸ

ОТГОВОРНИКЪ: СТЕПАНЪ КАНАРЯНЪ

Նամակ եւ դրամ  
պիկի ներկայացուց անս  
հասցիին

Редакция на вѣстникъ  
"Шаржумъ"  
Варна

Redaction du journal  
"Charjourn"  
Varna (Bulgarie)

Պոչկարիտ համար  
ձեռք է

15 ՍԱՆՔԻՄ

Արսասահմանի համար  
ձեռք է

20 ՍԱՆՔԻՄ

Գրութիւնք եւ չեկ  
սրուիք

ՎՃԱՐԹԻՄԻ ԲԱՏԱՆՈՐԻ ԳՐՈՒՈՂԸ ԲԱՏԱՆԳԻՆԸ ՊԵՏՔ Է ԿԱՆԿԻՆ ՎՃԱՐԷ

Ստույգ սղբիւրէ կը տեղեկացնեն մեզ թէ յայտնի յեզոփոխական Մուրատը—Համբարձում Պոյաճեանը որ ցմահ Արթուրեան տարկութեան դատապարտուած էր յաջողիւր է փախչել իր արտորափայլէն:

## ԱԶԳ. ԸՆԿԵՐՈՒԹԻՒՆՆԵՐ

Բարեկամ մը անցեալ օր Փարիզի շորածին հայկական Միութեան կանոնադրը կարդալով սա շատ սրամիտ դիտողութիւնը կը ընէր: Աս Փարիզի մէջ ալ ամէն օր մէյմէկ նոր ընկերութիւն կը հիմնուի. եթէ մինչեւ այսօր զանազան թերթերու մէջ կար դացածներս հաշուեմ. քանի մը տասնեակ պիտի ելլէ անոնց թիւը. բայց ո՞ր է ստոնց գործունէութիւնը, կը շարունակե՞ն, չեմ հասկնար: Զարմանալին այն է որ այդ բոլոր ընկերութեանց տակ ալ ստորագրողները միեւնոյն անուններն են. մանաւանդ Իսկենաէր ու Չոպանեան անունները անպատճառ պիտի գտնէք:

Ոչ միայն սրամիտ այլ և շատ ճշգրիտ դիտողութիւն մըն է ասիկա: Եթէ սա վերջին տասը տարիներուն արտասահմանի մէջ հիմնուած ազգ. ընկերութեանց ցանկը կազմելու ելլենք, քանի մը հարիւր հատ անպատճառ պիտի գտնենք անոնցմէ: Բայց ո՞ր են այդ ընկերութիւնները, գոյութիւն ունին՞ գեռ, կը գործեն, իրենց նպատակին հասած են, կամ հետամուտ են այդ նպատակը իրագործելու: Ոչ ոք գիտէ:

Ընկերութիւն մը հիմնուած ժամանակ, թերթերու մէջ պատահական թղթակցէ մը անոր լուրը կ'առնենք, շատ անգամ օյաւելեալ ու ճոխացեալ շարժաթանութիւններով, խրախու-

սականներով, եռանդուն ծրագրիներով, երազայից հեռապատկերներով: Բայց անոնցի մասնակը, շատ անգամ մէկ քանի ամիս միայն, ու ոչ այդ եռանդը կը մնայ, ոչ ալ ընկերութիւնը: Ս. յն բոլոր երիտասարդները որոնք քով քովի մեծ մեծ երազներ կը հիւսէին գեռ երկու ամիս առաջ, տեսնելով որ ինքնիրեն սչխարէի վրայ ստեղծել իսկ չի շարժիր, իրենց մեղկութեամբ անհրկած, կամայուկ մը կ'ընէին կը զնեն ու ալ չեն ելեար իսկ իրենց բոլոր գործունէութիւնը կը լլայ ծրագրի մը յղանալ, կանոնագիր մը չի նել և շրջաբերական մը հանել—եզական իզմեր բոլոր հայերուս—համար, որուն ներքեւը ատենապետ, ատենադպիր, գանձապետ և անգամք փառաւորապէս կը բազմին: Այդ անունները թերթերու մէջ լայս կը տեսնեն, ամէն սր կ'իմանայ թէ աչխարհի վրայ այսինչ մարդը կայ եզեր որ այնինչ ընկերութեան ատենապետը կամ ատենադպիրը կամ չեմ գիտեր ինչը ընտրուել է, ու ամէն բան կը վերջանայ: Այսչափ էր արդէն այդ մարդոց ալ ուզածը: Ու ամէն բան կը մոռցուի, կը փակուի:

Այս երեւոյթի գլխաւոր պատճառը եթէ մեր յարատեւութեան ոգիի պակասն է, միևնոյն ժամանակ կան ուրիշ կարեւոր պատճառներ, զորս զանց չի պիտի կրնանք քանել, երբ կուզենք ճշմարտութիւնը պարզել:

Նախ որ ազգ. ընկերութիւն մը կազմուած ատեն, ոչ կազմողները և ոչ ալ յարողները, անկեղծութեամբ և բուն նպատակին սիրով ոգեւորուած կը մտենան զարթին: Ընդհակառակը, իւրաքանչիւր ոք անջատ ու հիմնուած ընկերութեան նպատակին բոլորովին օտար հնկատումներով կը մտենայ. մէկը կուսակցական նպատակներ փոփականտայի հոյ գտնել կը խորհի, ուրիշ մը կ'երկով մը քսակը պարարտացնելու ճամբաները կը

փնտռէ, երրորդ մը նպատակաշարժար ու բարեբար ծանօթութիւններու շրջանակ մը ստեղծել կը խորհի, ուրկէ գուցէ պիտի օգտուի օր մը, և այսպէս հաշիւներ որոնք զիրար կը հակասեն և ընկերութեան նպատակին հետ բոլորովին խոտոր կը համեմատին: Ու այս ամենէն ետքը ի՞նչ զարմանալու բան կրնայ ըլլալ մտածել, թէ Պոզոս փաշայի մը հսկայ հովանաւորութիւնը կրող որսերգործական ընկերութիւն մը որ այնքան իրարանցումի տեղի տուաւ, վաղը պարզ ազգատախնամի մը հազիւ թէ տեղը կ'որոգանայ բռնել, կամ այսօրուան հայկական Միութիւնը՝ ի սկիւն տէրեան բոլոր հիմնարկութիւններու պէս անյայտ ու խորհրդաւոր կեանք մը ունենայ, շատ շատ քանի մը անօթիներ կ'յտացնելով միայն:

Ոչ ոք բաւի անցեալը աչքի առջեւ ունենալով երբէք չենք յուզուիր կամ հրճուիր նոր ընկերութիւն մը հիմնուելու լուրը ստացած ատեններս: Մեզի համար զիչ գործ պէտք է միայն, եթէ տեսնենք որ այդ ընկերութիւնները կը գործին, արգիւնք մը յառաջ կը բերեն, օգտակար կը հանդիսանան ու եւ կ'երկով, ոչ թէ անհատներու, այլ հանրութեան որուն սակամ նա ուզի ու ծառայելու կոչուած են, ի հարկէ երկու ձեռքով կը ծափենք իրենց գործունէութիւնը:

Յուսանք որ եզրպատուի «բարեգործականը» և Փարիզի «հայկականը», երկուքն ալ այս վերջին տեսակէն ըլլան, և մենք օր մը, մտաւոր ժամանակի մէջ անջուշտ, առիթ ունենանք ի սրտէ ու անկեղծօրէն գնահատելու անոնց գործը և բարոյապէս քաջալերելու, եթէ կարելիութիւն ըլլայ:

ՇՄԱԹ

## ԹՂԹԱԿՑՈՒԹԻՒՆ

Իզմիր 4 Մայիս 1906

Վերջին իսյտառակ գատաճարութեան ի վեր, մեր կեանքը հոս անտանելի դարձած է: Վայ անունը կրող մարդուն համար ամէն վայրկեան կը սպասեն զարհուրելի անակնկալներ, ձերբակալութիւն, խուզարկութիւն, բանտարկութիւն, տանջանք, աքսոր և նոյն իսկ մահ: Հայը հոս ամենուն աչքէն ինկած ու կասկածելի տարր մըն է հիմայ, Ոստիկանութեան գործած կամայականութիւններն ու խժգժութիւնները չափ ու սահման չունին, և ամէն օր տասնեակներով զոհեր անոր ճիրաններուն մէջ շարաշար կը տանջուին:

Պատահական ձերբակալութիւններ, առանց ու եւ հիմնկամ լուրջ պատճառի, ամենաստորին միջոցներով ու լրբութեամբ կը շարունակուին. բոլոր հայերը անկարագրելի սարսափներու մէջ ինկած են. ամէն փողոցի ծայրերը ստիկաններ կ'եցած են, սրտնք անցնող զարձոյնները կը խուզարկեն, հայհոյելով, նախատելով ու շարժարեւոյժ: Անպատճառ պիտի հասկնան թէ ուրկէ՞ կուգան կամ ո՞ր կերթան, եթէ քիչ մը կասկածին, ալ գործ ունիս. անմիջապէս քանի մը զապթիէներ շուրջ կը պատեն ու հըրելով, հրճակելով կը տանին մտակայ մէր քէզ մը, ու անկէ յետոյ ալ ոչ ոք կրնայ ըսել թէ ի՞նչ եղար կամ պիտի ըլլաս: Հարիւրին ինսունը ինը տարինբով հոս կը մնան և հազիւ թէ մէկը կրնայ ազատիլ, ունեցածը չունեցածը վրայ տալէ ետքը:

Անցեալ օր փողոցէն անցնող խեղճ հայ բանուր մը բռնեցին, և անմիջապէս սովորական հարցումը ըրին թէ ուրկէ՞ կուգայ: Մարդը պատասխանեց թէ գործէն կը գառնայ. «կէ օթիւրին ի չէր իր հրամայեց անմիջապէս բերտ շափուչը»:





թաթարները կը գրգռէ .

— Ինքիսի նահանգային ընդհանուր վարչիչը, ամէն օր նոր նոր հրամանագրեր կը հանէ, կերեւայ թէ քաղաքացիները տէրօրի մէջ պահուեալ համար . Ոչ ապաքէն սահմանադրական ազատ Ռուսիա է հիմայ : Ահա թէ ինչ են այդ հրամանները . Ուսումնական եթէ իրենց խանութը շրանան, կամ եթէ իրիկուան ծէն առջ գոցեն, երէք հոգար բուպի տուգանքի կը դատապարտուին : Գործադուր ընդդ կամ գործադուրի գրգռողը կը ձերբակալուի, կը բանտարկուի եւ անմիջապէս կաքոտորի, առանց դատական ձեւակերպութեան : Ով որ այս հրամաններուն դէմ կենայ, անոր դէմ սուր կամ հրացան կը գործածուի : Կաներալ նահանգապետը կաւելցնէ . զես յոյս ունեմ որ նրանք որոնք դէմ ուղղուած է ներկայ կարգադրութիւնը, կատարելապէս կը համոզուին, որ ես կիրաքործեմ ստանդարտ, առանց ուշադրութիւն դարձնելու նրա հետեւանքներին վրա, առանց տատանուելու և հաստատակամութեամբ, Կեցցէ՛ ահա մանադրական Ռուսիան :

ԱԶԳԱՅԻՆ ՔՐՈՆԻԿ

Կահիրէէն պատահական լծղութակցի մը ուղղած նամակէն կը քաղենք յետեւեալը .

«Աւագ Աւրբաթ օրը նախկին «Արշալոյս» լրագիրը հրատարակող Դ. Նիլիշէ Ռորոստանը խեղդամահ ընելու ոճրափորձութիւն մը անդր ունեցած է, իր հին բարեկամներէն մէկուն ընկալարանին մէջ :

«Ճիար Ռորոստան այդ վայրագ փորձին հետեւանքներէն իր առողջութիւնը կորսնցունելով կառավարական հիւանդանոցը փոխադրուած է, հետեւաբար միջոց ունեցած չէ որինաւոր միջոցներով այդ ստոր ձեռնարկին պատճառները և պատասխանատուները երեւան բերիլու :

«Կարծողներ կան թէ, կը գրէ լծղութակցիցը, այդ ոճրին պատճառը միմիայն հանդուցեալ Շիշմանեան եպիսկոպոսի երկասիրութեան հրատարակութիւնը կառնցնելն է, սակայն մենք անբաւական կը նկատենք այս առարկայի մասին քանի որ «խեղճ» Գաւթիթաներ մինչեւ ոճրագործութեան մղելու :

— Հիւանդանոցի նորակառոյց շէնքը, որ վերջերս կանաչանքնագատութեանց նիւթ եղաւ և որոնք բոլորովին անհիմն չէին, ամբողջովն համար երկաթէ սիւներ կը շանան զետիզել : Բայց ձեռնհաս անձեր կը յայտնեն թէ այդ այնքան խախուտ ու անպատշաճ խառնուած է որ դրուելիք երկաթները պիտի չի կրնան շէնքին տոկունութիւնը ապահովել :

— Յուստիս պատարագի խընդիրը Պոլսոյ մէջ այլ եւս կարգադրուած հարց մը կը համար-

ուի վերջին անգամ Մայր եկեղեցւոյ մէջ ալ պատարագը եռաձայն երգեցողութեամբ կատարուեր է : Անշուշտ քիչ ասենէն Պոլսոյ բոլոր եկեղեցիները պիտի սպասին տիրացուներու շարքի կան պաշտպանութեան բրգեցողութիւններէն և կանոնաւոր, ներգաշնակ ու միօրինակ երգեցողութիւն մը պիտի տիրէ բոլոր եկեղեցիներու մէջ, Կարգը մեր պուլկարահայ եկեղեցիներուն է ուրեմն : Մեր եկեղեցւոյ բարեկարգութեան նախաձեռնող իր թողալանները պէտք է հասկնան որ ամենէն անմիջակաւ բարեկարգութեան կարօտ հարցը արարողութեանց և երգեցողութեանց ներդաշնակաւորումն է, և այդ ալ կը լրացնուի իր կամքս առաջին ընդունուելով և պատարագը տիրացուներու անհամ պոնտուքներէն ազատելով :

ՆԵՐՔԻՆ ԼՈՒՐԵՐ

Շարաիէ մը ի վեր ե, կրիս վեհապետ Ն. Ա. Բ. իր հիւրերու հետ միասին (Գերմանիոյ կայսրուհին եղբորը և տիկինը) բոլոր Պուլկարիան կը շրջագայեն, անցեալ կիրակի օր եկան քաղաքէս մէկ ժամ հեռու գանուող Եւքսինեան պալատը, ու հիմայ պիտի երթան Քարնովա, պուլկարական երեքմիկ թագաւորանիստ քաղաքը, ուր կը տեսնուին մեծ պատրաստութիւններ զիրենք դիմաւորելու համար :

— Ամսոյս 18ին մեծ շքով, Ն. Ա. Բ. պիտի բանայ քաղաքին նորակերտ նաւահանգիստը որ գրեթէ աւարտած է : Այս խկ պատճառով կը տեսնուին մեծ պատրաստութիւններ : Կառավարութիւնը այս հանդէսը աւելի մեծաշուք ընծայելու համար, երկաթուղւոյ երթեւեկութեան գինը 50 0/0 զեղջած է :

— Չորսվար Յօնչէլը յիշատակագիր մը կը պատրաստէ, որ քիչ օրէն պիտի ուղղէ պուլկար հասարակութեան, և ասով պիտի յայտարարէ թէ՛ ինչո՞ւ համար քաջուած է մակեղոնական գործէ :

— Իրումաիոյ թագաւորին յորելեանի առթիւ, ուսումնական «Ռէճէլ Գարուլի» անուն շրջեւաւը, զբոսային ճանապարհորդութիւն մը պիտի ընէ դէպի Վառնա : Շրջեւաւը այսօր պիտի մեկնի Գոնսթանցաէն և ամսոյս 11ին (վաղը) պիտի հասնի քաղաքս :

ԱՐՏԱՔԻՆ ԼՈՒՐԵՐ

Ք Ո Ւ Ր Ք Ի Ա

Բարիզեան հեռագրական գործակատարութիւններէն մին կը հաղորդէ թէ՛ Սուլթանը հիւանդ

է ծանրապէս, և այս սոսիին անգամ է որ իր թագաւորութեան ժամանակամիջոցին նա անկողին կը մտնէ :

Մ. Խ. — Նա միշտ հիւանդ կը լըլըլ, սակայն միշտ սուտ կը լըլէ, տար Աստուած որ այս անգամ իրաւի ըլլար ու այնպէս ճիւղալի մը ձեռքէն ազատեր :

Ի Ո Ւ Ո Ւ Ա

Յօրին ծննդեան տարօրայ ձիւ առթիւ, արքունիքի բոլոր պաշտօնեաները և խորհրդականները ներկայ էին Բէյլէհէճի պալատան մէջ :

Ամենէն աւելի աչքի կը գործնէր Տուժարի նախագահ Մուրոմցիվը, որու վրայ կեդրոնացած էր ամենուն ուշադրութիւնը : Ի կեղեցւոյ մէջ եղած կրօնական արարողութեան ժամանակ նա խաղահը ամենէն առաջին դիմքը կը գրաւէր, և բարեկերպ կատարէն ամենէն զեղեցիկներէն մին յատուցուած էր նախագահին, որու հետ միասին եկեղեցւոյ արարողութեան տարտելէն ճաքը պալատը գնաց : Արքունիքի մէջ տրուած հացկերութի պահուն նախագահ Մուրոմցիվը, ներքին գործոց նախարարէն աւելի պատուաւոր տեղ մը կը գրաւէր : Տուժարի նախագահը, այս նախարարէն աւելի առաջ բաժակաճառ մը խօսեցաւ և լսեց Յօրին կենացը համար :

«Պիլժէլէլ Վէտոմոսդի» լրագիրը կը հաւատտէ թէ՛ կուսակցական շրջանակներու մէջ պատրաստակամութիւն ցոյց կուտան կամաց կամաց գործարել այն ծրագիրը, որ Տուժարի հրապարակ բերաւ իր գահաճառին տուած պատասխանին մեջ :

— Լօնտոնի Հայոս բարքի մէջ, օրիորդ մը անձնասպան եղած է : Թուսական գործակալութիւնը կը հաստատէ թէ՛ անձնասպան օրիորդը ռուսահպատակ, Պէրիպէլ Միլիարտէրի աղջիկն է : Վերջինքալ օրիորդը որպէս անիշխանական ճանչցուած էր :

— Մակեդոնիայի Սոլթուրկա լրագրին ինքնապուրկէն կը հաղորդեն :

Ամսոյս 6 ին Յարին նախագահութեան տակ նախարարական ժողով մը գումարուած է, ուր մեծամասնութեան հաւանութեամբ որոշուած է 24000 քաղաքական յանցաւորներու ներումն շնորհել, ասոր միմիայն երկու հոգի հակառակած են :

— Պրանքիւրգէր Սոլթուրկա լրագիրը հեռագիր մը կը հրատարակէ, Տուժարի նախագահին ուղղուած, Միտհաք փոշայի որդի, Ալի Հայտար Միտհաք պէլի կողմէն : Այս հեռագրով Ալի Հայտար Միտհաք պէլը կը յայտնէ իր հետ միասին այն բո-

լոր թուրքերու ջերմ զգացումները, որ իր հերթը Միտհաք բաշայի սահմանադրական սկզբունքներուն հաւատարմամբ սցած են, և կը շնորհաւորէ ռուսական ազգը ստացուած ազատութեան սուրունով :

Վերոյիշեալ հեռագիրը Ալի Հայտար Միտհաք բաշան այսպէս կը վերջացնէ. «Ենք կը փոփոքինք որ օր մը Ազատ թուրքիան սերտի և բարեկամական ջերմ զգացումներով միանայ ազատ և Մեծն Ռուսիոյ հետ միասին :

Փահաճառի պատասխանի մասին եղած հակաճառութիւնները արտասու են : Միայն այս պատասխանի մէջ վոյվոյսութիւն մը ներմուծուած է այն ալ այն կէտերն են որ կը շոշափեն կուստարադիւննա Սովետը և զիւր զացիներու բաշխուելիք ներկի հարցը : Այս փոփոխութեան անմիջապէս հետք քուէակութեան գրուեցաւ և գրեթէ միահամուռ ընդունելութիւն կ'ու, միայն վեց հոգի հակառակեցան :

— Թոմսովի բանտին մէջ Մարիա Սերբիտովնա յեղափոխական Նուհին շարժարողները մէկիկ մէկիկ իրենց արդար պատիժը կըստանան յեղափոխական կուսակցութիւնը իր սուտ մէկ ուղղում մի համաձայն, անոնցմէ արդէն երեքը սպանած է : Այսպէս անուանուած է : Այսպէս անուանուած է : Այսպէս անուանուած է :

— Ժամանակէ մը ի վեր Անգլո-Թուսական մերձեցման մը համար խոսքեր կը լըլըլ : «Ազանտարտ լրագիրը կը հաւատտէ թէ Սոլթուրկա արդէն համաձայնութիւն մը գոյացած է անգլո-ռուսական կառավարութեան միջեւ, և Տուժարին հաստատ հողի վրայ հիմնուելէն ետքը, այս համաձայնագիրը պիտի ներկայացուի հաստատուելու համար :

ՊԱՐՍՄԱՍՏԱՆ

Շահը մինչդեռ Եւրոպա մեկնել կը պատրաստուէր, մէկէն ի մէկ կ'ընտանահար եղաւ, շատ յոյս չկայ թէ նա կրնայ իր օձիքը ազատել այս հիւանդութեան ձեռքէն :

Մ. Խ. — Իսլամ վեհապետներու համար այս տարի կոտորած մը կայ անշուշտ, Թիւրքի պէլի զրակը դեռ ես իր գերեզմանին մէջ չը սառած, Մուղաֆիէրէտտին Շահը կրնայ կաթուածահար, Աուլթանը կը հիւանդանայ քանի քանի հայերս կը բազմայինք Մուղաֆիէրէտտինի ապաքինելը, այնքան կարմիր ճիւղին մահը :